ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Տավուշի մարզի <<Չինարիի Վ. Սաղոյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի /17դասաժամ/, ֆիզիկայի /13դասաժամ/, տեխնոլոգիայի /4 դասաժամ/, ֆիզկուլտուրայի/8 դասաժամ/, ինֆորմատիկայի, թվային գրագիտության և համակարգչային գիտության /8 դասաժամ/, երաժշտության /3 դասաժամ/, արվեստ /2 դասաժամ/, հայոց լ. և գրականության /10 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /Ձև 1/, լուսանկար 3x4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

-անձը հաստատող փաստաթուղթ

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/

-ինքնակենսագրություն /Ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ , բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն մարտի 23-ից մինչև ապրիլի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա ապրիլի 8 -ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Չինարիի Վ.Սաղոյանի անվան միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել /093/ 11-52-76 հեռախոսահամարով: